

րովին կը զիւրացնեն առաջադրուած եւ սկըսուած գործը: Ասոր համար է որ 50 տարուան ընթացքին հայերուն շինածը թուրքերը ձեռք կը բերեն միմիայն 5 տարիէն: Եւ ինչպէս որ տարբերութիւնը խոշոր է այս տարիներուն միջեւ, նոյնքան ակներեւ է թուրքերու յառաջդիմական քայլերուն արդիւնաւորութիւնը միւս մարդերուն մէջ, ընկերային, տնտեսական, բարոյական, քաղաքակրթական, մշակութային, վերաշինական եւ գաղափարական հոգիւրուն վրայ առանձնակի:

Եւ հոս պէտք է փնտոել պատճառը այն փաստին, որ Թուրքիան Թուրքիա մնացած չէ՛, հակառակ մեր պնդումին ու անկամ ցանկութեան:

Այսուհանդերձ, ընկ. Ռուբէն չի յոգնիր, եւ սա վեց գլխաւոր ազդակներու հինգին բացակայութեան մէջ կը փնտոէ «քեմալականներու ինքնախարէութեան» մահաւճիւրը. — 1) իր երկրին տէր ըլլալը, 2) իր թիւը եւ զայն

բազմապատկելու կարողութիւնը, 3) ներդաշնակութիւնը իր մէջ ապրող ժողովուրդներու հետ կամ ասոնց չգոյութիւնը, 4) իր ժողովուրդի ձեռներէցութիւնը, ընդունակութիւնը յարմարելու ժամանակին ու քաղաքակրթութեան, 5) այդ ժողովուրդի տնտեսական կարողութիւնը եւ անկախ գոյութիւնը, 6) արտաքին քաղաքական պայմաններու նպաստաւոր ըլլալը իր ազատ բարգաւաճման համար, եւն.:

«Եթէ այս վեց պայմանները միայն նկատի առնենք, — կ'ըսէ ընկ. Ռուբէն, — պիտի տեսնենք որ բացի առաջին ազդակէն, միւսները կը բացակային Թուրքիոյ համար»:

Այժմ, փորձենք քննել այս տեսակէտը, հարցերու շարուած կարգով, որով եւ սպասած կ'ըլլանք մեր յօդուածագրի բոլոր առարկութիւնները:

(Շարունակելի)



## H. KASHMANIAN

(A. K. HITTI & CO.)

Երբեւեկի տումսեր՝ ամէն տեղի համար:  
Պատրաստութիւն անցագրի եւ նամբորդական  
քուրքերու:

Անձնական ձրի ծառայութիւն մինչեւ շոգեմա:

**552 W. 186th Street**  
**New York, City**